# Հայտարարություն

ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի Չիվա, Ռինդ, Ելփին բնակավայրերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ <ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի միջնակարգ դպրոց> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

**Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու**

**պարտադիր պայմաններն են՝**

1. *ՀՀ քաղաքացիությունը,*
2. *Բարձրագույն կրթությունը,*
3. *Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) :*

**Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝**

1. *Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,*
2. *ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,*
3. *Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,*
4. *Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն 3 օր առաջ),*
5. *Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),*
6. *Աշխատանքային գրքույկի պատճենը,*
7. *Զինվորական գրքույկի պատճենը:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ, բնօրինակները վերադարձվում են հավակնորդին:

Փաստաթղթերն ընդունվում են 2021 թվականի հունիսի 2-ից մինչև 2021 թվականի հունիսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021թ հուլիսի 8- ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Ելփինի միջնակարգ դպրոցում: Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Ելփին բնակավայր, փ.8 շ4 :

Տեղեկությունների համար զանգահարել +37477-65-05-78 կամ +37493-93-08-24 կամ +374-78-54-86 հեռախոսահամարներով:

**ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի Չիվա, Ռինդ, Ելփին բնակավայրերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման խորհուրդ**